ԱԶԳԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցաղագս գերապայծառ եւ պանծալի սուրբ և կեղեցոյն որ յԱղբարար քաղաքի. որոյ նիւթ նպաստաւորուրեան քարանցն բերաւ յերկրէ հեռաստանէ, զորոյ մեք զիրն եւ զտեղին հաստատեաւ յայտ արասցուք :

Ի ժամանակս շինութեան հոյակապ և հռչակաւոր և բարձրանշան քաղաքին Աղթամարայ բարձրացոյց Փրկիչն մեր Յիսուս զբազուկս օծելոյն իւրոյ Դաւիթ կայ՝ հարստահարել զգաղանաբարոյ ազգն Իսմայելի. զորս կապեաց զձեռանէ իւրմէ հաստատիմն խորհրդովք, և պատերազմական ուժեղ արութեամբք, իբրու դանդանաւանաւ իւիք զկզակս նոցա ՀՄԼեալ Թոշնացուցանէր, սկսեալ 'ի Արաց և Պարսից զբոլոր Աստուածտական՝ մինչև ցՅուժաստան. որում կամ է աւանդէր, և յորոց ոչն կամէր 'ի բաց կորզէր, զայլս 'ի վերայ այլոց յարուցանէր, և զՀազարս և զբիւրս 'ի նոցանէն իմաստութեան սրոնն սատակէր. իսկ այլոց պատերազմաւ պատահեալ տայր բերանոյ սրոյ, և յանխնայ կոտորէր, երբեմն անձամբ և երբեմն 'ի ձեռն զօրացն :

Եւ յառնելն արքայի զայսոսիկ յաՀախեաց պատերազմաւ և 'ի վերայ Ասորեստանի, և գաւառս բազումս ամրոցովքն հանդերձ յինքն ձգեալ կորզեաց : Եւ տեսեալ մերձ 'ի դրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց 'ի գեօղն Կոտոմ կոչեցեալ, լինելով սեփհականաբար Ուրարեկն կոչեցեալ ազգի, սպառ սպուռ կորուսեալ ջնջէ զազգն, և զշինուածս ամրոցին 'ի հիմանց տապալեալ՝ զքարինս նորա բարձեալ բերէ 'ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով 'ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձև պղծալից յարկայն զտաՀար փառաց : Աստանօր կատարի ասացեալն 'ի մարգարէէն՝ թէ որ հանէ զպատուականն յանարժանէն իբրև զբերան իմ եղիցի, ուր միշտ հանգչի Հոգին սուրբ, վերագրելով զմարգիկ յանստուերը լոյսն :

Եւ քանզի Հարտարապետ արուեստին էր Անուէլն, զոր 'ի վեր անգր ցուցաք, այր լի իմաստութեամբ և զօրաւոր 'ի գործս իւր, հրաշակերտէ զեկեղեցին զարմանագործ արուեստիւ, և զոր վերագոյնն ցուցաք կրօնաւորն ձեռն տայ նկարագրել զքարինն ՀՇգրտագործ նմանահանութեամբ, սկսեալ յԱբրահամայ և 'ի Դաւթէ, և մինչև ցՏէր մեր Յիսուս Քրիստոս, զդասս մարգարէից և առաքելոց յօրինեալ ըստ իւրաքանչիւր հանդիսի զարմանագործ տեսլեամբ : Ստեղծագործեալ ջոկագրէ և 'ի կարգս եկեղեցւոյն զյոլովս երէց, և զերամն հաւուց, միանգամայն և ըզդասս գազանաց, խոզից և առիւծուց, ցլուց և արջոց, ընդդէմ միմեանց զարդարեալս, զկենդանականին նոցա յուշ առնելով զմարտ, որ է յայժ ըղձալի իմաստնոց. ածեալ զԹիկամբք եկեղեցւոյն և շրջապատ պարունակ մի պանձալի մանրամասն հատուածովք յօրինեալ, կերպագրեալ որթս խաղողաբերս այգեգործովք և գազանովք և սողնովք հանդերձ համակեալք, որոց և կերպարանքն այլ և այլ զանազանութեամբք ըստ իւրաքանչիւր մասին առբերեն զտեսակս :

Իսկ 'ի չորից կողմանց 'ի վերայ գագաթան սրբութեանցն ՀՇգրտագործեալ զչորից աւետարանչացն պատկերս, որք և արժանաւորապէս իսկ են պակ ուրախութեան սրբոյ եկեղեցւոյ և վերագոյն քան զամենայն սուրբս : Նկարագրեալ է տեառնագրելով և ըզփրկչական պատկերս որ վասն մեր ըզգեցաւ մարմին երևելով մարդ, և է 'ի կամարս արևմտական խորանին. նմանահան ՀՇգրտութիւն յօրինեալ է ընդդէմ Փրկչին և զփառազարդ պատկեր արքային Դաւիթ կայ, որ մեծապարծ հաւատով բարձեալ ունի զեկեղեցին 'ի վերայ բազկացն՝ իբրև զսափորն ոսկի լի մանանայիւն, և իբրև զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ. կայ առաջի Տեառն կերպագրեալ այնպէս,

որպէս թէ զթողութիւն խնդրեսցէ մեղաց։ Որ թէպէտ և մերս պատմութեանց իցեն բանք, սակայն Թագաւորն ոչ վրիպի 'ի խնդրեալ պարգևացն՝ յուսացեալ առ հանդերձեալ հատուցմունն։

Դարձեալ և 'ի հարաւակողմ կուսէ խորանին 'ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է տեղի գահոյից, 'ի բարձանց 'ի խոնարհ կամարաձև աստիճանօք զէջն ունելով, որպէս զի իցէ տեղի աղօթից Թագաւորին զուսպ և զերծ 'ի մարդկանէ, որով 'ի միտս իւր եկեալ անզբաղապէս ընդ Աստուծոյ խօսեսցի։

Իսկ 'ի ներքուստ կողմանէ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապաճոյճ դեղովք, դրամբք արծաթապատօք և լի ոսկեհուռն զարդիւք, ոսկեպատ պատկերօք, և ականբք պատուականօք, և մարգարտահիւս զարդիւք, և պէսպէս երևելի և պայծառ սպասիւք, զոր հրաշափառապէս եցոյց մեզ երկրորդ Երուսաղէմ, միանգամայն և դուռն վերին Սիոնի։

Աստանօր կատարին մարգարէութեան նուագք, թէ ուրախ լեր անապատ ծարաւի. և դարձեալ եթէ՝ ցնծասցէ երկիր, և ուրախ եղիցին կղզիք բազումք։ Արդարև սա էր երբեմն անապատ ծարաւի. իսկ այժմ քաղաք մեծին Աստուծոյ գետահետեալ յերկուց մշտաբուղխ աղբերաց, 'ի սրբոյ աւազանէն, և յանապական արենէ Որդւոյն Աստուծոյ, արբուցանէ զոգւով ծարաւիս։

Իսկ զոր նաւակատեաց սորա դասիւք եպիսկոպոսաց և իշխանաց շքեղացուցանելով տօն մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարծանօք յիշատակ ազգաց յազգս։ Ահա ասացաք որ ինչ յաղագս սրբոյ եկեղեցւոյն։

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

քանի մը ազգաց կերակուր ուտելու կերպը։

Հետաքրքրական նիւթ մը կը համարինք քանի մը այլ և այլ ժողովուրդներու ու ազգաց կերակուր ուտելու կերպին վրայ համառօտ ծանօթութիւն մը տալ հոս մեր բանասիրաց, ցուցընելու համար թէ նաև այսպիսի պարզ նիւթի մը մէջ որչափ հեռու են ճշմարիտ բարեկրթութենէ։

Պատիվեան կղզեաց բնակիչները կերակուրնին առանձին առանձին կ'ուտեն. կը քաշուին տանը ամենածածուկ տեղուանքը, կը քաշեն պատուհանաց կտաւները, զոր իրենք փեղկի տեղ կը գործածեն, որպէս զի առանց տեսնուելու կարենան ուտել։ Ընդհանուր բարբարոսութեան և մարդկային ընկերութենէ նախնի ժամանակներէն առաջ եկած է ինքզինքը ծածկելը կերակուրի ժամանակ, վախնալով որ ուրիշ քաղցած զօրաւոր մարդ մը չգայ չյափշտակէ ձեռքէն իր ուտելիքը։ Կախարդութենէ վրայ ալ սաստիկ հաւատք ունենալով բարբարոսք՝ կը դողան որ չըլլայ թէ մէկը դիւթէ իրենց կերակուրը։

Պատիվացւոց առանձնական կերակուր ուտելուն ուրիշ պատճառ մ'ալ կայ։ Ասոնք չեն ախորժիր սեղանի նըստիլ՝ իրենցմէ թէ՛ տարիքով, թէ ընչիւք և թէ պատուով նուաստագունի մը հետ։ և որովհետև անհնարին է այսպիսի հաւասարութիւն մը հաստատելը, դատապարտուած են այս անընկերական կենաց։

Ասոնց հակառակ Փիլիպպեան կղզիներուն բնակիչքը շատ ընկերասէր են։ Երբոր անոնցմէ մէկը ընկեր մը չունի որ կարենայ բաժանորդ ըլլալ իր կերակրոյն, կ'երթայ կը փնտրէ ինչուան որ գտնէ. որչափ ալ անօթութիւնը զինքը նեղէ, պէտք է որ առանց հիւր մը գտնելու բան չուտէ։

Ինացի մեծատանց սեղանը զարդարուած է յախճապակով, գեղեցկա-